ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Բանասիրական ֆակուլտետի խորհրդի հարգարժա՛ն անդամներ,

2019 թ. սեպտեմբերի 6-ին՝ ժամը 14.15-ին, տեղի կունենա ֆակուլտետի խորհրդի ընդլայնված նիստ։

ՕՐԱԿԱՐԳ

1. Բանասիրական ֆակուլտետի 2019-2020 ուսումնական տարվա աշխատանքների մասին։

զեկուցողներ՝ Ա. Գալստյան
Ն. Խաչատրյան
Լ. Գալստյան

2. Ընթացիկ հարցեր։

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ 2019-2020 ՈՒՍՏԱՐՎԱ

ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 6-Ի ԹԻՎ 1 ՆԻՍՏ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 1

ԼՍԵՑԻՆ՝ Բանասիրական ֆակուլտետի 2019-2020 ուսումնական տարվա աշխատանքների մասին։

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ բանասիրական ֆակուլտետի դեկան, բ.գ.թ., դոցենտ Աշոտ Գալստյանը, դեկանի տեղակալ բ.գ.թ., դոցենտ Նաիրա Խաչատրյանը, ֆակուլտետի պրակտիկայի ղեկավար, բ.գ.թ., դոցենտ Լուսինե Գալստյանը, հայ հին եւ միջնադարյան գրականության եւ նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչի պաշտոնակատար, բ.գ.դ., պրոֆ. Աելիտա Դոլուխանյանը, հայ նոր եւ նորագույն գրականության եւ նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչի պաշտոնակատար, բ.գ.դ., պրոֆ. Սուրեն Դանիելյանը, հայոց լեզվի եւ նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ, բ.գ.դ., պրոֆ. Վազգեն Համբարձումյանը, հայոց լեզվի եւ նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի պրոֆ., բ.գ.դ. Լալիկ Խաչատրյանը, նույն ամբիոնի դոցենտ, բ.գ.թ. Ռուզան Ջուլֆայանը։

Ա. Գալստյանը մասնավորապես ընդգծեց դասապրոցեսի կազմակերպման աշխատանքները, հորդորեց դասախոսներին լինել կարգապահ։ Նա խոսեց հետազոտական աշխատանքի բաղադրիչին հատուկ ուշադրություն դարձնելու, ուսանողների հետ պարբերաբար անհատական աշխատանք կատարելու մասին։

Ն. Խաչատրյանն էլ նշեց, որ ֆակուլտետում խնդիրներ չկան, միայն հարկավոր է ժամանակին լրացնել էլեկտրոնային տեղեկագրերը, որպեսզի հնարավոր լինի ժամանակին կազմել լուծարքային տեղեկագրերը։

Լուսինե Գալստյանը հիշեցրեց, որ մեկնարկում են ԱԲ-3 եւ ԱԲ-4 կուրսերի պրակտիկաները։ Ժամանակին պիտի տեղադրել ամիսական եւ թիմային

աշխատանքների պլանները: Նա ավելացրեց, որ բանասիրական ֆակուլտետի առաջարկությամբ ԱՄ-2 կուրսի պրակտիկան անցկացվում է ավագ դպրոցներում:

Ա. Դոլուխանյանը խոսեց բուհի ուսանողակենտրոն քաղաքականության մասին եւ անհամաձայնություն հայտնեց բուհն ատեստավորող հանձնախմբի կարծիքին, ըստ որի մեր աշխատանքները կրում են դասախոսակենտրոն բնույթ:

Ս. Դանիելյանն ընդգծեց, որ ինչպես նախորդ, այնպես էլ այս ուսումնական տարում իր ղեկավարած ամբիոնի դասախոսական կազմը աշխատելու է գերբեռնված:

Ռ. Ջուլֆայանն ու Լ. Խաչատրյանը անդրադարձան թեմաների հաստատման և ուսանողներին բաշխման գործընթացի կազմակերպմանը: Լ. Խաչատրյանը խոսեց թեմաների պարտադրված լինելու մասին, իսկ Ռ. Ջուլֆայանի կարծիքով, ուսանողը երբեմն հնարավորություն չի ունենում դասախոսին ընտրելու, քանի որ դրանք ներկայացվում են առանց գիտական ղեկավարի անունը նշելու:

Ի պատասխան Վ. Համբարձումյանն ասաց, որ թեմաները կենտրոնացվում են ամբիոնում, որպեսզի դասախոսներն ու ուսանողները ինքնագործունեությամբ չզբաղվեն:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ ա) Թեմաները կենտրոնացնել ամբիոններում՝

1. հնարավոր կրկնություններից խուսափելու,

2. դասախոսների եւ ուսանողների ինքնագործունեությունը բացառելու համար,

բ) Տեղեկագրերը լրացնելիս ուշադրություն դարձնել հետազոտական աշխատանքի բաղադրիչին:

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 2

ԼՍԵՑԻՆ՝ բանասիրական ֆակուլտետի առկա մագիստրատուրայի երկրորդ կուրսի ուսանողուհի Աստղիկ Ռոլանդի Բոյաջյանին Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի անվանական կրթաթոշակի ներկայացնելու հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑ՝ բանասիրական ֆակուլտետի դեկան, բ.գ.թ., դոցենտ Աշոտ Գալստյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Աստղիկ Ռոլանդի Բոյաջյանին ներկայացնել անվանական կրթաթոշակի:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ ԱՇՈՏ Վ. ԳԱԼՍՏՅԱՆ

ՆԻՍՏԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ ՔՆԱՐԻԿ Ա. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Բանասիրական ֆակուլտետի խորհրդի հարգարժա՛ն անդամներ,

2019 թ. նոյեմբերի 1-ին՝ ժամը 14.20-ին, տեղի կունենա ֆակուլտետի խորհրդի նիստ։

ՕՐԱԿԱՐԳ

3. ԱԲ-4 կուրսի պրակտիկայի ամփոփում։

զեկուցող՝ Լ. Գալստյան

4. 1-ին կիսամյակի 1-ին միջանկյալ քննությունների արդյունքների մասին։

զեկուցող՝ Ն. Խաչատրյան

5. Ավարտական աշխատանքների եւ մագիստրոսական թեզերի խորագրերի մասին։

զեկուցողներ՝ ամբիոնների վարիչներ

6. Ընթացիկ հարցեր։

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ
ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ 2019-2020 ՈՒՍՏԱՐՎԱ
ՆՈՅԵՄԲԵՐԻ 1-Ի ԹԻՎ 3 ՆԻՍՏ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 1

ԼՍԵՑԻՆ՝ ԱԲ-4 կուրսի պրակտիկայի ամփոփման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ Բանասիրական ֆակուլտետի դեկան, բ.գ.թ., դոցենտ Աշոտ Գալստյանը, Պեյո Յավորովի անվան թիվ 131 հիմնական դպրոցի տնօրեն Սուսաննա Դավթյանը:

Ա. Գալստյանը հայտնեց, որ ռեկտորատում շահագրգիռ քննարկում է ծավալվել պրակտիկայի կազմակերպման ընթացքների շուրջ: Մասնավորապես նշեց, որ երկու դպրոցների՝ թիվ 131 եւ Էորնեկյան կրթահամալիր, տնօրեններ՝ Սուսաննա Դավթյանը եւ Սուսաննա Վարդանյանը բարձր կարծիք են հայտնել մեր ֆակուլտետի պրակտիկանտների եւ պատասխանատուների մասին: Սակայն շատ անելիքներ ունենք ուսանողների ակադեմիական գիտելիքների բարձրացման ուղղությամբ:

Իսկ Ս. Դավթյանը հավաստիացրեց, որ այս եւ նախորդ տարվա պրակտիկանտների միջեւ բավական տարբերություն կա: Ավելին, նրանք իրենց մասնակցությունն են բերում ներդպրոցական կյանքին, մասնակցում քննարկումների, մեթոդմիավորման նիստերին:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Զեկուցումներն ընդունել ի գիտություն:

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 2

ԼՍԵՑԻՆ՝ 1-ին կիսամյակի 1-ին միջանկյալ քննությունների արդյունքների մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑ՝ Բանասիրական ֆակուլտետի փոխդեկան, բ.գ.թ., դոցենտ Նաիրա Խաչատրյանը (կցվում է):

Նա նաեւ ընդգծեց, որ փոխվել է էլեկտրոնային համակարգում սխալ թույլ տալու եւ դիմում գրելու կանոնակարգը եւ հորդորեց առավել ուշադիր լինել դրանք լրացնելիս:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Զեկուցումն ընդունել ի գիտություն:

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 3

ԼՍԵՑԻՆ՝ Ավարտական աշխատանքների եւ մագիստրոսական թեզերի խորագրերի հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ հայ հին եւ միջնադարյան գրականության եւ նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչի պաշտոնակատար, բ.գ.դ., պրոֆ. Աելիտա Դոլուխանյանը, հայ նոր եւ նորագույն գրականության եւ նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչի պաշտոնակատար, բ.գ.դ., պրոֆ. Սուրեն Դանիելյանը, հայոց լեզվի եւ նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ, բ.գ.դ., պրոֆ. Վազգեն Համբարձումյանը:

Նրանք բոլորն էլ ընդգծեցին, որ խորագրերում պահպանել են մեթոդական բաղադրիչը: Բացի այդ՝ նախորդ տարիներից վերականգնված ուսանողներ կան: Ամբիոններում սպասում են վերաբաշխումներին:

Հայ նոր եւ նորագույն գրականության եւ նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչի պաշտոնակատար, բ.գ.դ., պրոֆ. Սուրեն Դանիելյանը վերահաստատման ներկայացրեց Սօսիկ Գազանճեանի թեման՝ «Գրիգոր Զոհրապ. «Ծանոթ դեմքեր». ակնարկային ժանրերի ուսուցումը դպրոցում»:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Զեկուցումներն ընդունել ի գիտություն: Սօսիկ Գազանճեանի ավարտական աշխատանքի թեմա հաստատել «Գրիգոր Զոհրապ. «Ծանոթ դեմքեր». ակնարկային ժանրերի ուսուցումը դպրոցում»:

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 4
Հարց 1

ԼՍԵՑԻՆ՝ Բանասիրական ֆակուլտետի դեկանի տեղակալ, բ.գ.թ., դոցենտ Կարեն Խանյանի «Թումանյանը եւ ռուսական պոեզիան» գրքույկը երաշխավորելու հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ հայ հին եւ միջնադարյան գրականության եւ նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչի պաշտոնակատար, բ.գ.դ., պրոֆ. Աելիտա Դոլուխանյանը, հայ նոր եւ նորագույն գրականության եւ նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչի պաշտոնակատար, բ.գ.դ., պրոֆ. Սուրեն Դանիելյանը, նույն ամբիոնի պուֆեսոր, բ.գ.դ. Մարտին Գիլավյանը:

Ա. Դոլուխանյանն ընդգծեց, որ ամբիոնում կարդացել են աշխատանքը, դիտողություններ եւ առաջարկություններ արել, որից հետո երաշխավորել են տպագրության:

Մ. Գիլավյանն ու Ս. Դանիելյանը կարծիք հայտնեցին, թե գուցե ավելի նպատակահարմար կլլիներ, զուտ թեմայից ելնելով, այն քննարկման ներկայացնել ռուս եւ արտասահմանյան գրականության ամբիոնում:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ բ.գ.թ., դոցենտ Կարեն Խանյանի «Թումանյանը եւ ռուսական պոեզիան» գրքույկը երաշխավորել տպագրության:

ՀԱՐՑ 2

ԼՍԵՑԻՆ՝ Բանասիրական ֆակուլտետի դեկան, բ.գ.թ., դոցենտ Աշոտ Վոլոդյայի Գալստյանի «Արեւելահայ գեղարվեստական վավերագրության լեզուն (19-րդ դ. 60-ական-21-րդ դ. 10-ական թթ.), գիրք Ա» մենագրության տպագրության երաշխավորության հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑ՝ Ա. Ղարիբյանի անվան հայոց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ, բ.գ.դ., պրոֆ. Վ. Համբարձումյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Աշոտ Վոլոդյայի Գալստյանի «Արեւելահայ գեղարվեստական վավերագրության լեզուն (19-րդ դ. 60-ական-21-րդ դ. 10-ական թթ.), գիրք Ա» մենագրությունը երաշխավորել տպագրության:

ՀԱՐՑ 3

ԼՍԵՑԻՆ՝ բ.գ.դ., պրոֆ. Վ. Համբարձումյանի «Լեզվաբանական տիպաբանություն» դասագիրքը տպագրության երաշխավորելու հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑ՝ հայոց լեզվի եւ նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ, բ.գ.դ., պրոֆ. Վազգեն Համբարձումյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ բ.գ.դ., պրոֆ. Վ. Համբարձումյանի «Լեզվաբանական տիպաբանություն» դասագիրքը երաշխավորել տպագրության:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Բանասիրական ֆակուլտետի խորհրդի հարգարժա՛ն անդամներ,

2019 թ. դեկտեմբերի 11-ին՝ ժամը 14.20-ին, տեղի կունենա ֆակուլտետի խորհրդի նիստ։

ՕՐԱԿԱՐԳ

7. Ֆակուլտետի 2019 թ. գործունեության ամփոփում։

զեկուցող՝ Ա. Գալստյան

8. Հայցորդների ատեստավորման մասին։

զեկուցողներ՝ ամբիոնների վարիչներ

9. Ընթացիկ հարցեր։

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ 2019-2020 ՈՒՍՏԱՐՎԱ

ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 11-Ի ԹԻՎ 4 ՆԻՍՏ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 1

ԼՍԵՑԻՆ՝ Ֆակուլտետի 2019 թ. գործունեության ամփոփումը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ բանասիրական ֆակուլտետի դեկան, բ.գ.թ., դոցենտ Ա. Գալստյանը, հայ հին եւ միջնադարյան գրականության եւ նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչի պաշտոնակատար, բ.գ.դ., պրոֆ. Աելիտա Դոլուխանյանը, հայ նոր եւ նորագույն գրականության եւ նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչի պաշտոնակատար, բ.գ.դ., պրոֆ. Սուրեն Դանիելյանը:

Ա. Գալստյանը շնորհակալություն հայտնեց համատեղ արդյունավետ աշխատանքի համար, ապա ներկայացրեց 2019 թ. ֆակուլտետի տարեկան հաշվետվությունը (կցվում է):

Ա. Դոլուխանյանն ընդգծեց, որ ֆակուլտետը հիանալի է աշխատել: Ամբիոնների միջեւ համագործակցային մթնոլորտ է:

Ս. Դանիելյանը խոսեց ՊԴԱ կազմի ներուժի շուրջ, նաեւ ընդգծեց ուսանողների՝ ամբիոնի աշխատանքներում ներգրավվածության, գիտաժողովներում ընդգրկվածության եւ նրանց գիտական աշխատանքները հրատարակելու նախաձեռնությունների մասին, որոնք պարբերական բնույթ են կրում:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ հաստատել ֆակուլտետի 2019 թ. տարեկան հաշվետվությունը:

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 2

Հարց 1

ԼՍԵՑԻՆ՝ Հայ հին եւ միջնադարյան գրականության եւ նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի հայցորդ Լիլյա Արթուրի Հարությունյանի ատեստավորման հարցը։

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑ՝ ամբիոնի վարիչի պաշտոնակատար, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, բան.գիտ.դոկտոր, պրոֆեսոր Ա.Գ.Դոլուխանյանը։

ՈՐՈՇԵՑԻՆ՝ ատեստավորել հայցորդ Լիլյա Հարությունյանին՝ հիմք ընդունելով մեկ տարվա ընթացքում կատարած աշխատանքները։

Հարց 2

ԼՍԵՑԻՆ՝ Հայ հին եւ միջնադարյան գրականության եւ նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի հայցորդ Էդգար Վլադիսլավի Ապրեսյանի ատեստավորման հարցը։

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑ՝ ամբիոնի վարիչի պաշտոնակատար, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, բան.գիտ.դոկտոր, պրոֆեսոր Ա.Գ.Դոլուխանյանը։

ՈՐՈՇԵՑԻՆ՝ ատեստավորել հայցորդ Էդգար Ապրեսյանին՝ հիմք ընդունելով մեկ տարվա ընթացքում կատարած աշխատանքները։

Հարց 3

ԼՍԵՑԻՆ՝ Հայ հին եւ միջնադարյան գրականության եւ նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի հեռակա ասպիրանտ Հասմիկ Գագիկի Հովսեփյանի ատեստավորման հարցը։

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑ՝ ամբիոնի վարիչի պաշտոնակատար, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, բան.գիտ.դոկտոր, պրոֆեսոր Ա.Գ.Դոլուխանյանը։

ՈՐՈՇԵՑԻՆ՝ ատեստավորել հայ հին եւ միջնադարյան գրականության եւ նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի հեռակա ասպիրանտ Հասմիկ Գագիկի

Հովսեփյանին՝ հիմք ընդունելով մեկ տարվա ընթացքում կատարած աշխատանքները:

Հարց 4

ԼՍԵՑԻՆ՝ Վաչե Պարտիզունու անվան հայ նոր եւ նորագույն գրականության եւ նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի հայցորդ Աննա Մարատի Սարգսյանի ատեստավորման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑ՝ ամբիոնի վարիչի պաշտոնակատար, բ.գ.դ., պրոֆ. Սուրեն Դանիելյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ ատեստավորել հայցորդ Աննա Մարատի Սարգսյանին՝ հիմք ընդունելով մեկ տարվա կատարած աշխատանքները:

Հարց 5

ԼՍԵՑԻՆ՝ Վաչե Պարտիզունու անվան հայ նոր եւ նորագույն գրականության եւ նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի հայցորդ Ալիսա Աշոտի Սահակյանի ատեստավորման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑ՝ ամբիոնի վարիչի պաշտոնակատար, բ.գ.դ., պրոֆ. Սուրեն Դանիելյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ ատեստավորել հայցորդ Ալիսա Աշոտի Սահակյանին՝ հիմք ընդունելով մեկ տարվա կատարած աշխատանքները:

Հարց 6

ԼՍԵՑԻՆ՝ Վաչե Պարտիզունու անվան հայ նոր եւ նորագույն գրականության եւ նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի հայցորդ Հերմինե Հովսեփի Զարմանյանի ատեստավորման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑ՝ ամբիոնի վարիչի պաշտոնակատար, բ.գ.դ., պրոֆ. Սուրեն Դանիելյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ ատեստավորել հայցորդ Հերմինե Հովսեփի Զարմանյանին ՝ հիմք ընդունելով մեկ տարվա կատարած աշխատանքները:

Հարց 7

ԼՍԵՑԻՆ՝ Վաչե Պարտիզունու անվան հայ նոր եւ նորագույն գրականության եւ նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի հայցորդ Նինել Գագիկի Սարգսյանի ատեստավորման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑ՝ ամբիոնի վարիչի պաշտոնակատար, բ.գ.դ., պրոֆ. Սուրեն Դանիելյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ ատեստավորել հայցորդ Նինել Գագիկի Սարգսյանին՝ հիմք ընդունելով մեկ տարվա կատարած աշխատանքները:

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 3

Հարց 1

ԼՍԵՑԻՆ՝ Հայ հին եւ միջնադարյան գրականության եւ նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի «Ղեւոնդ Ալիշանը հանրագիտակ» ժողովածուի տպագրության երաշխավորության հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑ՝ ամբիոնի վարիչի պաշտոնակատար, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, բան.գիտ.դոկտոր, պրոֆեսոր Ա.Գ.Դոլուխանյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ «Ղեւոնդ Ալիշանը հանրագիտակ» ժողովածուն երաշխավորել տպագրության:

Հարց 2

ԼՍԵՑԻՆ՝ Հայ հին եւ միջնադարյան գրականության եւ նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի հայցորդ Նարինե Խաչիկի Շահբազյանի գիտական ղեկավարի եւ թեկնածուական ատենախոսության թեմայի հաստատման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑ՝ ամբիոնի վարիչի պաշտոնակատար, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, բան.գիտ.դոկտոր, պրոֆեսոր Ա.Գ.Դոլուխանյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Հայ հին եւ միջնադարյան գրականության եւ նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի հայցորդ Նարինե Խաչիկի Շահբազյանի գիտական ղեկավար նշանակել ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Աելիտա Գուրգենի Դոլուխանյանին, թեկնածուական ատենախոսության թեմա հաստատել «Կնոջ կերպարը միջնադարյան հայ բանաստեղծության մեջ ըստ ձեռագիր եւ տպագիր աղբյուրների»:

Հարց 3

ԼՍԵՑԻՆ՝ Ա. Ղարիբյանի անվան հայոց լեզվի եւ նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի ասիստենտ, բ.գ.թ. Լիլիթ Ավետիսյանի «Կայուն կապակցությունները գրաբարում. տեսական, գործնական եւ առցանց աշխատանքներ» ուսումնամեթոդական ձեռնարկի տպագրության երաշխավորման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑ՝ ամբիոնի վարիչ, բ.գ.դ., պրոֆ. Վ. Համբարձումյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ բ.գ.թ., ասիստենտ Լիլիթ Ավետիսյանի «Կայուն կապակցությունները գրաբարում. տեսական, գործնական եւ առցանց աշխատանքներ» ուսումնամեթոդական ձեռնարկը երաշխավորել տպագրության:

Հարց 4

ԼՍԵՑԻՆ՝ Վաչե Պարտիզունու անվան հայ նոր եւ նորագույն գրականության եւ նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի կազմած Հովհ. Թումանյանի 150-ամյակին նվիրված «Թումանյան. «Անհունի» ճամփով» ժողովածուն տպագրության երաշխավորելու հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑ՝ ամբիոնի վարիչի պաշտոնակատար, բ.գ.դ., պրոֆ. Սուրեն Դանիելյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ «Թումանյան. «Անհունի» ճամփով» ժողովածուն երաշխավորել տպագրության:

Հարց 5

ԼՍԵՑԻՆ՝ «Սփիւռք» Գիտաուսումնական Կենտրոնի կազմած Հակոբ Օշականի ամբողջական երկերի առաջին հատորի քննական բնագիրը տպագրության երաշխավորելու հարցը (գլխավոր խմբագիր եւ առաջաբանի հեղինակ՝ Սուրեն Դանիելյան):

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑ՝ Վաչե Պարտիզունու անվան հայ նոր եւ նորագույն գրականության եւ նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչի պաշտոնակատար, բ.գ.դ., պրոֆ. Սուրեն Դանիելյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Հակոբ Օշականի ամբողջական երկերի առաջին հատորի քննական բնագիրը երաշխավորել տպագրության:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ ԱՇՈՏ Վ. ԳԱԼՍՏՅԱՆ

ՆԻՍՏԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ ՔՆԱՐԻԿ Ա. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Բանասիրական ֆակուլտետի խորհրդի հարգարժա՛ն անդամներ,

2020 թ. փետրվարի 18-ին՝ ժամը 14.20-ին, տեղի կունենա ֆակուլտետի խորհրդի ընդլայնված նիստ։

ՕՐԱԿԱՐԳ

10. ՀՄ-3 կուրսի ավարտական ամփոփիչ քննությունների մասին ։

զեկուցողներ՝ Ա. Գալստյան
Վ. Դեւրիկյան
ամբիոնների վարիչներ

11. Պրակտիկայի ընթացքի մասին։

զեկուցող՝ Լ. Գալստյան

12. Ընթացիկ հարցեր։

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ
ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ 2019-2020 ՈՒՍՏԱՐՎԱ
ՓԵՏՐՎԱՐԻ 18-Ի ԹԻՎ 5 ՆԻՍՏ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 1

ԼՍԵՑԻՆ՝ ՀՄ-3 կուրսի ավարտական ամփոփիչ քննությունների մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ բանասիրական ֆակուլտետի դեկան, բ.գ.թ., դոցենտ Ա. Գալստյանը, հայ հին եւ միջնադարյան գրականության եւ նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչի պաշտոնակատար, բ.գ.դ., պրոֆ. Աելիտա Դոլուխանյանը, հայ նոր եւ նորագույն գրականության եւ նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչի պաշտոնակատար, բ.գ.դ., պրոֆ. Սուրեն Դանիելյանը, հայոց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի պրոֆեսորի պաշտոնակատար Գայանե Խալաթյանը:

Ա. Գալստյանը նշեց, որ համալսարանն ունի ընթացակարգ, որով կազմակերպվում է ավարտական աշխատանքների պաշտպանությունը: Այն հաստատված է համալսարանի գիտական խորհրդի կողմից: Այնտեղ նշված է, թե ինչպիսին պիտի լինի աշխատանքը, ինչ որակ պիտի ունենա՝ սկսած տառաչափից մինչեւ վերջին խնդիրը:

Այս տարվա ՀՄ-3 կուրսի աշխատանքները հաստատել էինք երեքուկես տարի առաջ, որտեղ մեթոդական բաղադրիչը այդքան խորացված չէր պահանջվում , բայց վերջին տարիներին մեր բուհը խնդիր է դրել բոլոր ֆակուլտետների առջեւ՝ ապահովել մեթոդական բաղադրիչի առկայությունը մեր ավարտական եւ մագիստրոսական թեզերում: Բանը հասել էր այնտեղ, որ որոշ ուսանողներ առավելություն էին համարում այն, որ իրենց թեման դպրոցական ծրագրում չկա, եւ այդ պատճառով չեն գնացել դպրոց եւ ուսումնասիրություն չեն կատարել: Եվ չեն մտածում, որ դրանով վատ վիճակի մեջ են հայտնվում ե՛ւ ինքը, ե՛ւ գիտական ղեկավարը, ե՛ւ ամբիոնը: Ուսանողը այս դեպքում հնարավորություն է ստանում փորձարկել նյութը: Եթե

ամբիոնը գտնում է, որ տվյալ հեղինակը արժանի է դասավանդվելու, կարող են ուսանողները գործընթացը կազմակերպել հումանիտար հոսքերում, գրել իրենց առաջարկությունները:

Այս տարի կազմվել է հանձնաժողով, որը եկել է ֆակուլտետ ուսումնասիրության, ներկա է եղել նաեւ քննությանը: Եվ դեռ եզրակացություն չի հրապարակել: Մենք չգիտենք ինչ վերջնարդյունք պիտի ներկայացվի:

Հիմնական հիմնախնդիրն այն է, որ մեր աշխատանքներում շատ քիչ է հետազոտական բաղադրիչը: Այսինքն՝ մենք չենք պատրաստում գրականագէտներ եւ լեզուաբաններ, մենք պատրաստում ենք մանկավարժներ: Եվ մեր աշխատանքները առավելաբար պետք է ունենան մեթոդական բաղադրիչ, այսինքն՝ արդյունքները պիտի փորձարկվեն դպրոցում, ուսումնասիրություն կատարվի, եւ որակական ցուցիչները արտացոլվեն մեր աշխատանքում: Հանձնաժողովի անդամները կարծում են, որ արդիականություն, նպատակ, խնդիրներ, եզրակացություններ կապը չի երեւում մեր աշխատանքներում: Հանձնաժողովի նախագահը ցույց տվեց մի աշխատանք, որի եզրակացություններում մանկավարժական որեւէ կետ գոյություն չուներ: Իսկ եզրակացություններում հանդիպում են շատ հայտնի դրույթներ, որոնք գրողների կյանքի հայտնի փաստեր են կամ լեզվական իրողություններ:

Ուսանողը պետք է ուսումնասիրի տեսական նյութը, ապա գնա դպրոց, տեսնի այդ նյութի դասավանդումը եւ ինքը կազմակերպի դասավանդման գործընթաց: Մենք ունենք նաեւ դպրոցի տնօրեն հանձնաժողովի անդամ՝ Տիկին Դավթյանը, որի դպրոցում նաեւ մեր ուսանողները հնարավորություն ունեն փորձարկելու իրենց աշխատանքի դրույթները:

Մեր մի շարք դասախոսներ շատ են նեղվում, երբ իրենց ղեկավարած ուսանողները են երաշխավորվում: Սակայն դա նորմալ գործընթաց է: Դասախոսը մտածում է, որ իր հեղինակությունը կարող է դրանից ընկնել: Բնավ: Ճիշտ հակառակը. դրանից կարող է այդ հեղինակությունը բարձրանալ: Կարող եք լինել

պահանջվող եւ պահանջկոտ դասախոս: Դասախոսներ կան՝ երաշխավորությունը պայմանավորում են ուսանողի ընտանեկան հանգմանքով. երեխաներ ունի:

Խնդրում եմ ըմբռնումով մոտենալ: Մենք պիտի գերագույն օբյեկտիվություն ցուցաբերենք: Երբեմն մեղադրանքներ են հնչում դասախոսների հասցեին, թե համագործակցում են kursayin.am եւ նման կայքերի հետ: Ես ուզում եմ, որ նման զրույցները ի չիք դառնան, եւ մենք օբյեկտիվորեն գնահատենք իրավիճակը: Եթե ուսանողը ունի թերացում, անկախ այլեւայլ հանգամանքներից՝ չպիտի մոտենա այդ տարվա ծանրաձողին: Պատկերացրեք, նրանք հաշտվում են այդ իրողության հետ, թեպետ երբեմն փորձում են զանգերով հարցեր կարգավորել, ինչը մերժվում է: Բացատրում ենք մարդկանց, որ եթե ուսանողը գա քննության հաջորդ տարի, դրանից ոչինչ չի փոխվի:

Որոշ դասախոսներ արդարացնում են ուսանողին, որովհետեւ դպրոցում ուսուցիչ է: Դա ոչինչ չի փոխում: Ուզում եմ շեշտել, որ գրականության ամբիոնները չեն երաշխավորել հետեւյալ դասախոսների մոտ գրող ուսանողներին՝ պրոֆ. Մարտին Գիլավյան, դոցենտներ Նաիրա Խաչատրյան, Նաիրա Տողանյան, Լուսինե Գալստյան, Լիլիթ Հովսեփյան, Ռուզան Դոլուխանյան, Գայանե Մարդյան: Խնդրում եմ, եկեք ծանր չտանենք: Այն դասախոսներին, ովքեր ղեկավարել են թույլ աշխատանքներ, պիտի հրավիրեն բացատրություն տալու:

Եկեք երաշխավորենք արժանի ուսանողներին, որպեսզի հետագայում պատասխանատվությունից զերծ մնանք: Գուցե գան եւ հարցնեն դեկանին եւ հայոց լեզվի ամբիոնի վարիչին, թե ինչու է աշխատանքը երաշխավորվել: Որոշ դեպքերում պատասխան չունենք: Մեր հայոց լեզվի ամբիոնի վարիչը այնքան դեմոկրատ էր, որ չերաշխավորվածների հարցը դրեց ամբիոնի անդամների քննարկմանը, քվեարկության:

Մենք պետք է համոզվենք՝ արդյոք ուսանողը ի՞նքն է գրել այդ աշխատանքը: Երբ հարց ես տալիս օգտագործված գրականության մասին, չի կարողանում պատասխանել: Հասարակ հարցերի չեն պատասխանում եւ ավարտում են

մագիստրատուրա: Գուցե սխալվել ենք, որ նմաններին երաշխավորել ենք, եւ շատերը զգացել են, որ նրանք արժանի չէին պաշտպանելու, բայց նրանք քննարկումների ժամանակ այնքան թրծվեցին, որ կարողացան բավարարի ներկայացնել իրենց աշխատանքը:

Առջևում ունենք ԱԲ-4 կուրսի ավարտական եւ ԱՄ-2 կուրսի մագիստրոսական աշխատանքների պաշտպանություններն են: Հնարավոր է, որ մենք 60 հոգուց 20-30-ին չերաշխավորենք հրապարակային պաշտպանության:

Մենք պիտի տանք արժանի շրջանավարտներ: Մենք չենք կարող շեղվել այս գծից: Մենք ընդունում ենք քննադատությունները: Անսխալական մարդ չկա: Պատրասվում ենք մայիսյան քննաշրջանին եւ պատրասվում ենք գերագույն օբյեկտիվություն ցուցաբերել եւ բացառապես երաշխավորել արժանի աշխատանքներ:

Ա. Դոլուխանյանը ընդգծեց, որ ճիշտ է նկատում Ա. Գալստյանը, որ բոլորովին չպետք է վատ զգալ, երբ ձեր ղեկավարած աշխատանքը չի երաշխավորվում ամբիոնում: Շատ ուրախ եմ, որ ունենք նախապաշտպանություն: Մարդիկ կան, որ թուղթը դնում են եւ անգիր արածը կարդում, որը տվել է գրողը: Որոշակի էր, որ շատ-շատերը գնահատական ստացան, բայց իրենք կապ չունեին դրա հետ: Եթե մարդը չի կարդացել վեպը, ինչպե՞ս է բառապաշարը հանել:

Մեզ կանչել էր ռեկտորը, կա լեզվի հանձնաժողով, որպեսզի հսկողություն սահմանվի: Այդ հանձնաժողովում երեք հոգի այդ ամբիոնից են՝ դեկանը, ամբիոնի վարիչը եւ պրոֆ. Լալիկ Խաչատրյանը: Մեկ հոգի էլ կուլտուրայի ֆակուլտետից է՝ դեկանի տեղակալ Արտաշես Մարտիրոսյանը: Այդ հանձնաժողովի առջեւ խնդիր էր դրված հետեւել աշխատանքներին: Ես պատասխանատվությամբ հայտարարում եմ, որ հանձնաժողովի անդամներից մեկն ասաց, որ գումար են վերցնում եւ գրում են ավարտական կամ մագիստրոսական աշխատանք: Դա պետք է բացառել: Եթե ամբիոնի դասախոսը թույլ չի տալիս իրեն անել դա, ինչո՞ւ պետք է դրսից որեւէ մեկն անի ու ծիծաղի մեզ վրա: Վերջին հաշվով, դա մեծ հարված է ազգային կրթությանը: Շատ եմ լսել ու խոցվել, որ մանկավարժական համալսարանը անգրագետ

շրջանավարտներ է տվել: Իսկ ինչու պիտի մեր բուհի պատիվն ընկնի: Դրա համար նախապաշտպանությունը շատ մեծ տեղ է գրավում: Մեր ամբիոնում 4-ից 3-ը չանցան: Նրանց ղեկավարները չվիրավորվեցին: Հենց իրենք էին ահազանգել, որ լավ չեն աշխատում: ԱՄՆ առաջնակարգ բուհերի մագիստրոսների կեսը չի պաշտպանում, դոկտորանտուրա ընդունվածների 1 տոկոսն է դառնում դոկտոր: Պահանջները խիստ են:

Իսկ մանկավարժական մասը հեշտ է: Պարտադիր չէ, որ ծրագրում լինի: Կարող ես ինքդ ներկայացնել, թե ինչպես ես պատկերացնում դասավանդումը: Ես այստեղ մի մեծ «բայց» եմ ուզում ասել: Լավ ուսուցիչ լինելու համար պետք է նախ ըստ ամենայնի առարկան իմանալ, նոր միայն մեթոդ մշակել: Գիտաճյուղը պիտի շատ ուժեղ զգացվի այդ աշխատանքում: Թե չէ միայն ձեւով մենք ամերիկյան սխալն ենք կրկնում:

Մի անգամ ԵՊՀ-ում դասախոսություն էր կարդում Մինեսոտա նահանգի ինչ-որ համալսարանի պրոֆեսոր: Հետո կլոր սեղան պետք է լիներ: Գրատախտակի վրա նկարեց տուն՝ աստիճանաբար ավելացնելով անհրաժեշտ մասերը: Հարցրեց՝ հասկանո՞ւմ ենք: Ես ասացի՝ ոչ: Դա 4-5 տարեկան երեխայի ասած բան էր: Անձնական վիրավորանք զգացի: Ասացի, որ 5-րդ դարում մենք Արիստոտել եւ Պլատոն ենք թարգմանել: Ուղղակի մի կախարդական փայտիկով բթացրել են մեր ուսանողներին: Նրանք կարող են ինքնուրույն լինել, եւ մենք պետք է օգնենք նրանց: Իսկ եթե որեւէ մեկը չի հասցնի, թող գա մյուս տարիներին: Մենք չթերանանք ղեկավարելու հարցում, մնացածն իրենց խնդիրն է:

Վ. Համբարձումյանը նկատեց, որ այս տարի պաշտպանված թեմաները նախկինում էին հաստատվել: Մենք ունենք անցած թեմաների բանկ, եւ ես մեկ առ մեկ ստուգում եմ, թե թեման արդյուք այլ ձեւակերպմամբ ներկայանո՞ւմ է: Անկեղծ ասած՝ նկատում եմ, որ երբեմն ներկայանում է նույն թեման տարբեր գործերում: Դա համարում եմ ոչ ճիշտ:

Այս տարի այն աշխատանքները, որոնք նախապաշտպանության ժամանակ ես համարեցի անհանձնարարելի, ամբիոնի որոշ անդամների համար այդպիսին չէին:

Նման հակառակությունների համար հիմք չկար: Դա ինձ դուր չի գալիս, եւ պիտի շտկենք ըստ ամենայնի: ՅՄենք քննարկումներ ենք անում ե՛ւ ղեկավարների ներկայությամբ, ե՛ւ ուսանողների առկայութեամբ, եւ ուսանողը ոչ մի անգամ հանդիպման չի գալիս, հետո բերում է աշխատանք, ղեկավարն էլ գրում է, որ գերազանց պիտի գնահատվի: Մի՞թե ուսանողը չպետք է կենդանի քննարկման միջոցով ներկայացնի աշխատանքը: Այս տարի երկուսը ստացան գերազանց գնահատականներ, որոնցից մեկն իսկապես արժանի էր: Բավարար ստացողների մեջ էին նրանք, ովքեր նախապես չէին երաշխավորվել եւ հետո քվեարկությամբ եկան պաշտպանության: Հայտարարեմ, որ այդպիսի բան չպետք է լինի, եւ ես հորդորում եմ մեր ընկերներին, որ զերծ մնան նման նախաձեռնություններից: Այս գործը ես այլ կերպ եմ պատկերացնում: Թույլ տվեք՝ իմ պատկերացումները չխաթարվեն:

Սուրեն Դանիելյանը նկատեց.- Մենք երկակի տպավորություններ ունենք մագիստրատուրայի ավարտական լսարանի հանձնած աշխատանքներից: Նախ, ճիշտ նկատվեց, մեր մագիստրոսների մի զգալի մասը ոչինչ չի անում անցած երկուսուկես տարիներին: Պարզապես մենք ինքներս էլ աչք ենք փակում, որ տանում են գրելու, իսկ գրողներ միշտ կհայտնվեն՝ մեզ բոլորիս ծաղրելով: Եվ այս առումով ես պաշտպանում եմ մեր ամբիոնների վարիչների եւ դեկանի այն տեսակետը, որ պետք է հարգենք ինքներս մեզ: Առաջին հերթին իմ դժգոհությունը սա է:

Մեր ուսանողը գիտական ցուցիչ չունի մագիստրատուրա ավարտելիս, մանավանդ՝ հեռակա բաժնում սովորողը: Տարրական հարցերի չեն պատասխանում: Մեր մագիստրոսներց շատերը չունեն հիմնական կրթություն եւ գալիս տապալվում են մեկ-երկու խնդրի շուրջ խոսելիս: Նրանք ճանապարհներ են որոնում, խորհրդատուներ գտնում եւ փորձում պաշտպանություն գտնել: Տիկին Գալստյանը եւ Աբրահամյանը գիտեն, երկու-երեք ամիսը մեկ քննություններ ենք կազմակերպում մասնագիտական առարկայի իմացության մակարդակը ճշտելու համար: Նրանցից մեկը, որը պետք է ավարտի, չգիտի թե «Գիքոր»-ի գործողությունները որտեղ են կատարվում, չնայած որ սկզբնական կրթության բաժանմունքն է ավարտել եւ

պարտավոր էր դա իմանալ: Կամ եթե խոսում է Գաբրիել Սունդուկյանի մասին, նրան սիրով տանում է Պոլիս, իսկ Զոհրապին բերում Թիֆլիս: Սա է մեր գրականության այսօրվա դրվածքը: Մեր բարյացակամությունը շահագործվում է: Մեր խստությունը ավելի քան կարեւոր է: Անցյալ տարի տիկին Դոլուխանյանի հարցն եմ հիշում ուսանողին «Հյուսիսափայլ»ի մասին, որ շփոթեց Հյուսիսային համալսարանի հետ: Եվ եթե մենք նրան այդ պահին դնում ենք 60 միավոր, մեր ձեռքն է որ կտրում ենք: Կար մի ժամանակ, երբ ինձ շատ էին քննադատում խիստ գնահատելու համար: Բայց եկեք խիստ լինենք: Ավելի լավ է մեկ-երկու հարցումն անհանդուրժող լինենք, բայց իրականում բոլորս շահած ենք դուրս գալու մեր մոտեցումների մեջ: Սկզբունքայնությունը ամենից կարեւորն է: Ինչո՞ւ պիտի գան ուրիշները մեզ համար բարեվարքության դասեր տան, էթիկայի հանձնաժողովը գա մեզ մանկավարժության տարրերի անհրաժեշտ սկզբունքների մասին խոսի: Եկեք մեր մասնագիտական աստիճանը չզոհաբերենք մանր բարեվարքություններին: Խիստ լինենք, եւ այդ խստությունից բոլոր գոհ կլինենք:

Երկրորդ հանգամանքը վերաբերում է գիտականի եւ մանկավարժականի հարաբերակցության խնդիրներին: Ես նայեցի օտար լեզվի թեմաները: Այնտեղ մոտ 80 տոկոսի մոտ չկա մանկավարժական ցուցիչ: Վերնագրում ընդգծված չէ: Եկեք իսկապես մանկավարժությունը դարձնենք կարեւոր պայման, բայց գիտաճյուղը ոտնահարել թույլ չտանք, երբ ուսանողին հարցնում ես՝ Թումանյանը երբ է մահացել, պատասխանում է՝ 30-ականներին: Ստիպված նշանակեցի, որ վերականգնվեր: Հետո կստիպենք, կսովորի: Մենք պիտի մեր դրած գնահատականների տերը լինենք, մենք մեր ուսանողների տերը պիտի լինենք:

Ա. Գալստյանը, սակայն, հաստատեց, որ ավարտական աշխատանքները պետք է լինեն մանկավարժական ցուցիչով:

Գ. Խալաթյանն առաջարկեց, որ մանկավարժական ուղղվածությունը գերակշռող չլինի: Գուցե դիպլոմայիններում բաշխվածությունը հավասարաչափ պետք է լինի,

բայց մագիստրատուրայում գիտական աշխատանք են կատարում: Եթե մենք 90 տոկոսով մեթոդական աշխատանք ենք կատարում, գիտականությունը կորչում է:

Ա. Գալստյանն ասաց, որ կանոնակարգում գրված է, որ երկու գլուխ պիտի ունենա աշխատանքը, որից առաջինը պետք է տեսական բնույթ կրի, իսկ երկրորդը՝ մեթոդական:

Ա. Դոլուխանյանը նկատեց, որ պարտադիր չէ երկու գլուխ ունենա աշխատանքը: Եթե հարցադրումներ կան, կարող է աշխատանքն ունենալ չորս գլուխ:

Ա. Գալստյանն էլ ավելացրեց, որ մեկ գլուխը ամբողջությամբ պետք է հետազոտության նկարագրություն լինի, որովհետեւ որոշ աշխատանքներում դրվում է միայն դասի նմուշ-օրինակ: Վերջին գլուխը պետք է լինի հետազոտության վերլուծություն:

Մենք ունենք նաեւ հանձնաժողովի նախագահ բ.գ.դ., պրոֆ. Վարդան Դեւրիկյանի եզրակցությունը: Ընդհանուր կարծիքը դրական է (կցվում է): Ընդունում ենք դիտարկումները եւ հաշվի կառնենք: Հանձնաժողովի երեք անդամները դրսից են եւ հետաքրքիր դիտարկումներ են կատարում մեր աշխատանքի վերաբերյալ:

Վ. Համբարձումյանն առաջարկեց արձանագրությունը տալ ամբիոններին:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ քննարկումն ընդունել ի գիտություն եւ առաջիկա աշխատանքներում առաջնորդվել հետեւյալ քայլերով՝

ա) Նախապաշտպանությունների ժամանակ հնարավորինս բացառել թույլ կամ ոչ ինքնուրույն աշխատանքների երաշխավորումը:

բ) Ուշադրություն դարձնել մեթոդական բաղադրիչի պահպանմանն ու կատարմանը: Ուանողներին հորդորել անպայմանորեն մեթոդական հատվածում ներառել նյութի փորձարարությունը:

գ) Ուշադրություն սեւեռել մասնագիտական գիտելիքների գնահատմանը: Տեսական նյութին չտիրապետող ուսանողը չի կարող գործնականորեն արդյունավետ դաս վարել:

դ) Խորհրդի նիստի արձանագրությունը տրամադրել ամբիոններին, էթիկայի հանձնաժողովին եւ ռեկտորատին:

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 2

ԼՍԵՑԻՆ՝ Պրակտիկայի ընթացքի մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ Ֆակուլտետի պրակտիկայի ղեկավար, բ.գ.թ., դոցենտ Լուսինե Գալստյանը, ԱԲ-3 կուրսի ուսանող Կարլեն Նազարյանը:

Լ. Գալստյանն ընդգծեց, որ ընթացքի մեջ են ՀԲ-3 եւ ՀԲ-5 կուրսերի պրակտիկաները: Արդեն երկրորդ տարին է, որ այդ պրակտիկան անցկացվում է մարզերում: Սա ե՛ւ լավ կողմ ունի, ե՛ւ վատ: Լավն այն է, որ ուսանողներն այդ ընթացքում կարողանում են իրենց շրջաններում լինել: Բայց մենք ունենում ենք վերահսկողության խնդիր, մանավանդ որ այդ կուրսերը classroom հարթակում չեն աշխատում: Ես խնդրել եմ բոլոր մեթոդիստների էլեկտրոնային միջոցներով կապ հաստատել ուսանողների հետ եւ նաեւ տեսազանգերով ստուգել: Կարելի է դասաժամին զանգել եւ մասնակցել դասագործընթացին: Հակառակ դեպքում ուսանողները կարող են բարեխոսել եւ նստել տանը: Մենք ունեցել ենք նման դեպք, որը կանխվել է:

Այս պրակտիկաները պաշտպանությամբ պիտի ավարտվեն: Այդ մասին մեզ ուշ են տեղեկացրել, եւ պիտի ուշադրությամբ զբաղվենք վերահսկողությամբ, չնայած վարչությունը կազմել է երթուղի, դասախոսները գրանցվել են, եւ յուրաքանչյուրը մի քանի անգամ գնում է դպրոցներ: Մենք ունենք նաեւ մեթոդիստներ, որոնք երթուղուց դուրս ունեն իրենց անհատական երթուղին: Դա նույնպես ուղարկված է ռեկտորատ: Օրինակ՝ դոցենտ Սուսաննա Ղարիբյանը եղել է Սեւանում; Սակայն ունենք ուսանողներ Վայոց Ձորի կամ Լոռվա մարզերում եւ երթուղի չունենք: Դրա համար այս մարզերում վերահսկողությունը էլեկտրոնային տարբերակով խնդրում եմ ավելի

ուժեղացնել: Թղթապանակների հարցը վարվում է այնպես, ինչպես առկա համակարգում:

Առաջիկայում ունենք ուսումնաճանաչողական պրակտիկա առկա բակալավր երկրորդ կուրսի համար: Խորհրդակցությունը լինելու է փետրվարի 20-ին, ժամը 12.30-ին:

Խնդրանք ամբիոնների վարիչներին: Դասաբաշխումներ իրականացնելիս, եթե հնարավոր է, պահպանել համամասնությունը, որպեսզի դասախոսները շատ չծանրաբեռնվեն լսարանային ժամերով: Դասախոսներ կան, որ օրերով չեն կարողանում դպրոց գնալ:

Ա. Դոլուխանյանը պատասխանեց, որ դա հնարավոր չէ:

Ուսանող Կարլեն Նազարյանը հարցրեց՝ հնարավո՞ր է առկայի համար թղթապանակները լինեն էլեկտրոնային:

Լ. Գասլտյանը պատասխանեց, որ մեր ֆակուլտետում այդ փորձարարությունը լինելու է:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ զեկուցումն ընդունել ի գիտություն:

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 3

ՀԱՐՑ 1

ԼՍԵՑԻՆ՝ Հայ հին և միջնադարյան գրականության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի հայցորդ Կարեն Մարատի Մանուչարյանի գիտական ղեկավարի և թեկնածուական ատենախոսության թեմայի հաստատման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ ամբիոնի վարիչ, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, բան. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Ա.Գ.Դոլուխանյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Հայ հին և միջնադարյան գրականության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի հայցորդ Կարեն Մարատի Մանուչարյանի գիտական ղեկավար նշանակել ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, բանասիրական գիտությունների դոկտոր,

պրոֆեսոր Ալիտա Գուրգենի Դոլուխանյանին, թեկնածուական ատենախոսության թեմա հաստատել «Գուրգեն Խանջյանը ժամանակակից հայ գրականության համատեքստում»:

ՀԱՐՑ 2

2019-2020 1-ին կիսամյակի առաջին լուծարային փուլը, որը լրացնելուց հետո պիտի գա երկրորդ փուլը:

բ) Եւս մեկ հայտարարություն՝ կապված google classroom ծրագրի հետ: Մարտ ամսից տեղի են ունենալու դիտարկումներ: Խնդրում եմ ուշադիր լինել: Արդյոք բոլոր դասընթացներն են տեղադրված: Հայոց լեզվի ամբիոնի մասնագետը այլեւս չի աշխատում, եւ ես հանձնարարել եմ դեկանի օգնականին՝ հետեւելու հարթակում իրականացվող աշխատանքներին: Միայն նյութեր տեղադրելը բավարար չէ: Կարող եք ձայնագրություններ կատարել դասագործընթացում եւ տեղադրել: Օրինակ՝ տիկին Դոլուխանյանը իր հարցազրույցները, իր բանախոսությունները տեղադրում է հարթակում: Պրն Դանիելյանն էլ ունի նման դասախոսություններ ունի: Տիկին Խալաթյանը նույնպես ունի նման փարձառություն: Այդպիսի ոչ ստանդարտ խոսքը այսօր շատ գովելի է:Մենք ունենք ցուցադրական ամբիոններ, եւ երեւի հենց բանասիրականից էլ սկսվեն աշխատանքները: Չի բացառվում, որ մարտյան առաջին նիստը սկսվի մեզանից:

Սիրելի՛ գործընկերներ, ապրիլի 30ին, ժամը 15.00-ին տեղի կունենա ֆակուլտետի ընդլայնված նիստ, հղումը՝ https://meet.google.com/evv-agbe-sen :

Օրակարգ

1. Ֆակուլտետում ուսումնական գործընթացների մասին։

2. Ընթացիկ հարցեր։

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ 2019-2020 ՈՒՍՏԱՐՎԱ

ԱՊՐԻԼԻ 30-Ի ԹԻՎ 6 ՆԻՍՏ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԼՍԵՑԻՆ՝ Ֆակուլտետում ուսումնական գործընթացների մասին։

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ ֆակուլտետդի դեկան, բ.գ.թ., դոցենտ Աշոտ Գալստյանը, դեկանի տեղակալ, բ.գ.թ., դոցենտ Նաիրա Խաչատրյանը, Վ. Պարտիզունու անվան հայ նոր եւ նորագույն գրականության եւ նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ, բ.գ.դ., պրոֆ. Սուրեն Դանիելյանը, հայ հին եւ միջնադարյան գրականության եւ նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ, պրոֆ. Ալիտա Դոլուխանյանը, հայ նոր եւ նորագույն գրականության եւ նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի պրոֆ., բ.գ.դ. Մարտին Գիլավյանը, հայ հին եւ միջնադարյան գրականության եւ նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի դոցենտ, բ.գ.թ. Լիլիթ Հովսեփյանը։

Դեկանը նշեց, որ պարբերաբար հանդիպումներ է ունենում ուսանողության հետ, քննարկում էլեկտրոնային դասընթացների հետ կապված հարցադրումներ։

Ֆակուլտետում չունենք դասախոսներ, որոնք չեն կարողանում ուսումնական գործընթան իրականացնել էլեկտրոնայի համակարգով:

Շարունակվում են նաեւ պրակտիկաները ԱԲ-3, ԱՄ-1 եւ ՀՄ-2 կուրսերում:

Հունիսի 5-10-ը կազմակերպվելու են ավարտական աշխատանքների եւ մագիստրոսական թեզերի պաշտպանությունները: Նախապաշտպանությունները պետք է անցկացվեն մինչեւ մայիսի 15-ը: Նա բացատրեց նաեւ քննակարգը, ղեկավարների, ընդդիմախոսների եւ գնահատման համակարգի հետ կապված մանրամասներ:

Ինչ մնում է քննություններին, ապա ուսանողները բոլորը պիտի տոմսեր վերցնեն միաժամանակ եւ պատրաստվեն, ինչը Աելիտա Դոլուխանյանի եւ Սուրեն Դանիելյանի դիտարկումով դժվարացնում է վերահսկողությունը:

Դեկանը խոսեց վարձավճարների մասին: Ուսանողների որոշ մասը չի վճարել, բայց իրավունք է ստացել մասնակցել քննություններին: Մարտին Գիլավյանն առաջարկեց այդ պարագայում վերջին քննությանը չթողնել ուսանողներին:

Դեկանի տեղակալ Նաիրա Խաչատրյանը ներկայացրեց քննությունների կազմակերպման գրաֆիկներն ու էլեկտրոնային տեղեկագրերի լրացման մեջ փոփոխությունները, ըստ որի՝ հաճախումը պետք է բոլորին գնահատել 100 միավոր, ընթացիկ ստուգումը կատարել ըստ էլեկտրոնային հանձնարարության եւ ուսանողի ցուցաբերած ակտիվության: Որոշողը դասաախոսն է:

Լիլիթ Հովսեփյանը հետաքրքրվեց հեռակա համակարգում սովորողների գնահատման չափորոշիչներով: Նաիրա Խաչատրյանը պատասխանեց, որ այդ համակարգում գնահատումը տեղի է ունենում ինչպես նախկինում:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Աշոտ Գալստյանի զեկուցումն ընդունել ի գիտություն եւ ամփոփիչ ստուգումներն ու պաշտպանությունները կազմակերպել ըստ նախանշված գրաֆիկների:

Ֆակուլտետի խորհրդի հարգարժան անդամներ,

Ս.թ. դեկտեմբերի 16ին, ժամը 15.00ին տեղի կունենա ֆակուլտետի խորհրդի ընդլայնված նիստ։

Օրակարգ

1. Ուսումնական գործընթացի մասին։

Զեկուցողներ՝ Ա.Գալստյան

Ն. Խաչատրյան

Ամբիոնների վարիչներ

Լ. Գալստյան

2. Ընթացիկ հարցեր։

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 1

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԽՈՐՀՐԴԻ 2020 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 16-Ի ԹԻՎ 10 ՆԻՍՏԻ

Հարց 1.

ԼՍԵՑԻՆ՝ 2020 թվականի ուսումնական գործընթացի մասին։

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ բանասիրական ֆակուլտետի դեկան բ.գ.թ., դոցենտ Աշոտ Գալստյանը, հայոց լեզվի եւ նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ, բ.գ.դ., պրոֆ. Վազգեն Համբարձումյանը, Հայ հին եւ միջնադարյան գրականության եւ նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչի պաշտոնակատար, ՀՀ ԳԱԱ թղթակից-անդամ Աելիտա Դոլուխանյանը, Վ. Պարտիզունու անվան հայ նոր եւ նորագույն գրականության նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի պրոֆ. Մարտին Գիլավյանը, ֆակուլտետի պրակտիկայի ղեկավար դոցենտ Լուսինե Գալստյանը, դեկանի տեղակալ դոցենտ Նաիրա Խաչատրյանը։

Դեկան Աշոտ Գալստյանը շեշտեց, որ համավարակի շրջանում ուսումնական գործընթացվը կազմակերպվել է պատշաճ։ Ֆակուլտետը ամբողջովին աշխատել է առցանց։ Միայն Սեպտեմբերի առաջին երկու շաբաթն են առաջին կուրսեցիները հաճախել համալսարան։ Այս ուսումնական տարում ընդունվել է 80 ուսանող, ձեւավորվել է երկու հոսք։ Հեռակա ուսուցման համակարգում նույնպես բավական լավ ցուցանիշ է գրանցել ֆակուլտետը։ Ընդունվել է 40 ուսանող, ինչը շատ ավելին է, քան Երեւանի Պետական Համալսարան ընդունվածների թիվը։

Աշխատանքներն են կատարվել նաեւ դիմորդների ներգրավման հարցում։ Նա հատկապես շեշտեց պրոֆ. Աելիտա Դոլուխանյանի այցը Արագածոտնի մարզ, դասախոսներ պրոֆեսոր պաշտոնակատար Գայանե Խալաթյանի, պրոֆ. Մարտին Գիլավյանի, դոցենտ Սուսաննա Ղարիբյանի անունները։

Նա նաեւ շեշտեց, որ դասախոսական կազմը շարունակել է մասնակցել առցանց գիտաժողովների եւ հոդվածներ հրապարակել տարվեր գիտական հանդեսներում:

Առաջիկա մեկ շաբաթվա ընթացքում ամբիոններում կանցկացվեն նաեւ ՀՄ-3 կուրսի մագիստրոսական թեզերի նախապաշտպանությունները, իսկ արդեն հունվարի վերջին կամ փետրվարի սկզբին կկազմակերպվի պաշտպանություն:

Ա. Գալստյանն ընդգծեց, որ ֆակուլտետում կատարված աշխատանքներն ամփոփված են ամբիոնների հաշվետվություններում, որոնք արդեն ներկայացված եւ ի մի են բերված:

Պրոֆ. Ալիտա Դոլուխանյանը նշեց, որ իրենց ամբիոնում կանոնավոր կազմակերպվել են նիստեր, քլասրում հարթակում անցկացվել են դասերը: Տպագրվել է Ալիշանի 200 ամյակին նվիրված ժողովածու:

Պրոֆ. Վազգեն Համբարձումյանը շեշտեց, որ ամբիոնը ժամանակին կազմել եւ ուսանողներին է հանձնել ավարտական աշխատանքների եւ մագիստրոսական թեզերի թեմաները: Դասերը պարապվել են, բացթողումներ չեն եղել: Նա հատկապես կարեւորեց առաջին կուրսեցիների հետ աշխատանքը՝ ընդգծելով, որ բավական բարձր գիտելիքներ ունեն, եւ նրանց հետ բարեխիղճ աշխատելը պարզապես մեր պարտականությունն է:

Հայ նոր եւ նորագույն գրականության ամբիոնի անունից պրոֆ. Մարտին Գիլավյանը հայտնեց, որ այնտեղ նույնպես ուսումնական գործընթացը կազմակերպվել է անխաթար: Ամբիոնի անդամները մասնակցել են մի շարք գիտաժողովների, տպագրել հոդվածներ եւ ուսումնասիրություններ; Տպագրվել է Հովհաննես Թումանյանի 150 ամյակին նվիրված «Թումանյան. «անհունի» ճամփով» նյութերի ժողովածուն: Ամբիոնում ավարտական աշխատանքներ եւ մագիստրոսական թեզեր գրող ուսանողների հետ պարբերաբար կազմակերպվում են էլեկտրոնային խորհրդատվություններ:

Դոցենտ Լուսինե Գալստյանն անդրադարձավ պրակտիկայի կազմակերպման ընթացքներին: Նա նշեց, որ ինչպես ուսումնական գործընթացը, պրակտիկան

նույնպես կազմակերպվել է ֆակուլտետում: Մագիստրոսները վարել են դասեր ուսանողների շրջանում, իսկ բակալավրիատի ուսանողները կազմակերպել են սիմուլյացիոն պարապմունքներ, երբ ուսանողներից մեկը հանդես է գալիս ուսուցչի դերում, մյուսները՝ աշակերտների:

Դոցենտ Նաիրա Խաչատրյանը պարզաբանումներ ներկայացրեց էլեկտրոնային տեղեկագրերի լրացման կարգի վերաբերյալ, հատկապես հորդորեց դասախոսներին ուշադիր լինել ամփոփիչ քննություն ունեցող առարկաների դասախոսներին: Կուրսային աշխատանքների ամփոփման մասով նկատեց, որ այն կարող է անցկացնել դասախոսը առանց ամբիոնի վարիչի պարտադիր ներկայության:

Հաճախումների հաշվառման համար ֆակուլտետը որոշել է գնահատականն իջեցնել 4 եւ աւելի բացակայություններ ունեցող ուսանողների պարագայում:

Պարզաբանումներ տրվեցին նաեւ հարակից ֆակուլտետներում հայոց լեզու եւ գրականություն առարկայի տեղեկագրերի լրացման կարգի վերաբերյալ:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Ֆակուլտետում կատարված աշխատանքների մասին զեկուցումներն ընդունել ի գիտություն:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ ԱՇՈՏ Վ. ԳԱԼՍՏՅԱՆ

ՆԻՍՏԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ ՔՆԱՐԻԿ Ա. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ